Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 օգոստոսի 2024 թվական | ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24» ծածկագրով գնման ընթացակարգը և ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կարիքների համար պաշտպանիչ արտահագուստի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել «Սերգեյ Հովհաննիսյան Արարատի» ԱՁ-ն և 2024 թվականի մարտի 3-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Սերգեյ Հովհաննիսյան Արարատի» ԱՁ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24-01/088 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«Սերգեյ Հովհաննիսյան Արարատի» ԱՁ-ի կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները (պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում), որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Սերգեյ Հովհաննիսյան Արարատի» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Սերգեյ Հովհաննիսյան Արարատի» ԱՁ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**